ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2013Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

Համայնքի վարչական տարածքը 646.9 հա է: Տնտեսությունների քանակը կազմում է 765 առ 01.01.2013թ.դրությամբ: Բնակչության թիվը՝ 2998 է /1502 տղամարդ, 1496 կին/, որից երկարատև բացակայողների թիվը կազմում է 296, որից տղամարդ 168, կին 128, ժամանակավոր բացակայողների թիվը 64, որից տղամարդ 54, կին 10:

Մուսալեռի գյուղապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

Կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

Հրավիրել և վարել է Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու թվով 10 նիստ: Արձակել է 49 կարգադրություն, ընդունել է 48 որոշում: Տրվել է 1136 տեղեկանք: Ելից գրությունների թիվն է 217, մտից գրությունների թիվն է 206:

Ֆինանսների բնագավառում

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի կողմից ներկայացված հաստատված բյուջեների համաձայն՝ 2013 թ.-ի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 8057.3 հազար դրամ, եկամուտներ է նախատեսվել 46209.7 հազար դրամ, որից վարչական բյուջեով 44778.9 հազար դրամ, իսկ ֆոնդային բյուջեով 1430.8 հազար դրամ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ վարչական բյուջեն եկամուտների մասով կատարվել է 91.7% կամ պլանով նախատեսված 44778.9 հազար դրամի դիմաց կատարվել է 41058.7 հազար դրամ, այդ թվում սեփական եկամուտների գծով 18063.7 հազար դրամ, իսկ Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի գծով 25846.7 հազար դրամ,այլ աղբյուրներից տրանսֆերտներ 868.5հազար դրամ:

Սեփական եկամուտներ՝

Հողի հարկից եկամուտ է նախատեսվել 6000.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 5152.9 հազար դրամ (85.9%):

Գույքահարկի գծով նախատեսվել է 8800.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 8044.0 հազար դրամ (91.4%):

Ընդամենը տեղական տուրքեր է նախատեսվել 461.0 հազար դրամ, փաստացի գանձվել է 403.9 հազար դրամ (87.6 %):

Ոչ հարկային եկամուտներ, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ է նախատեսվել 631.7 հազար դրամ, փաստացի գանձվել է 280.5հազար դրամ (44.4%): Տեղական վճարներ է նախատեսվել 2021.0 հազար դրամ փաստացի գանձվել է 610.4 հազար դրամ (30.2 %):

Այլ ոչ հարկային եկամուտներ է նախատեսվել 150.0 հազ.դրամ:

Համայնքի սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքեր են նախատեսվել 1438.0 հազար դրամ փաստացի գանձվել է 1096.1 հազար դրամ (76.2 %):

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 8057.3 հազ. դրամ:

Մուսալեռի գյուղապետարանի 2013թ. բյուջեով ծախս է նախատեսվելվարչական մասով 44778.9 հազար դրամ, փաստացի ծախսվել է 37516.7 հազ.դրամ ,իսկ ֆոնդային մասով նախատեսվել է 9488.1 հազար դրամ, փաստացի ծախսվել է 5103.2 հազ.դրամ:

Վարչական բյուջեով աշխատավարձի և հավելավճարներ հոդվածներով ծախս է նախատեսվել 19309.7 հազար դրամ, փաստացի ծախսվել է 19262.8 հազար դրամ (99.7 %):

Սոցիալական նպաստներ / սոց. օգնություն / է նախատեսվել 3000.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 3000.0 հազար դրամ (100.0%):

Այլ մշակութային միջոցառումների համար նախատեսվել է 300.0 հազար դրամ: Համայնքի աղբահանման, կոմունալ ծառայության ծախսեր է նախատեսվել 3000.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 2050.0 հազար դրամ (68.3%):

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման և այլ ծախսերի համար ծախս է նախատեսվել 11111.8 հազար դրամ, փաստացի ծախսվել է 7015.6 հազար դրամ (63.1%):

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին ծախս է նախատեսվել 7057.4 հազար դրամ փաստացի ծախսվել է 6188.3 հազար դրամ (87.7%):

Պահուստային ֆոնդը նախատեսվել է 1000.0 հազար դրամ:

Ֆոնդային բյուջեով նախատեսվել է 6488.1 դրամ, փաստացի ծախսվել է 5103.2 հազար դրամ (53.8 %):

Շենքերի և շինությունների կառուցում հոդվածով նախատեսվել է 4820.0 հազար դրամ փաստացի ծախսվել է 1815.8 հազար դրամ (37.7 %):

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով նախատեսվել է 2546.1 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1532.4 հազար դրամ (60.2%):

Վարչական սարքավորումների ձեռք բերման ծախսեր է նախատեսվել 1622.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 1495.0 հազար դրամ (92.2%) :

Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր է նախատեսվել 150.0 հազար դրամ:

Նախագծահետազոտական ծախսեր է նախատեսվել 350.0 հազար դրամ, փաստացի ծախսվել է 260.0 հազար դրամ (74.3 %):

Տրվել է դրամական օգնություն՝ ֆինանսապես անապահով թվով 34 բնակչի, բուժման նպատակով՝ թվով 12 բնակչի, հարազատին կորցրած թվով 16 բնակչի, Հայրենական մեծ պատերազմի և Ղարաբաղյան պատերազմի մասնակիցներին, սիրիահայ թվով 5 ընտանիքներին:

Թվով 12 անվճարունակ հարկատուները օգտվել են շինությունների գույքահարկի արտոնություններից:

Գյուղապետարանը աշխատավարձի գծով պարտքեր չունի:

Պաշտպանության բնագավառում

Լրացվում է Մուսալեռի գյուղական համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը:

2013 թվականի ընթացքում զորացրվել է թվով 20 զինվոր:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Սահմանված կարգով տրվել է համայնքի վարչական սահմաններում իրականանացվող թվով 3 բնակելի տան, 1 ջերմոցային տնտեսության և համայնքում խմելու ջրագծերի անցկացման շինարարության թույլտվություն:

Կատարվել է համայնքի լուսավորության համակարգի ընթացիկ վերանորոգում:

Անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի հողային ֆոնդի նպատակային օգտագործման համար:

Կազմվել է հողային հաշվեկշիռը:

Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

1. Գր. Լուսավորիչ, Տիգրան Մեծ փողոցներում կատարվել է ջրագիծ անցկացնելու աշխատանքներ:
2. Մուսալեռի մարզադաշտի ոռոգման համար ձեռք է բերվել խողովակ,

3. Կատարվել է մանկապարտեզի կոյուղահորի ծածկման և Անի թաղամասի կոյուղագծի մաքրման աշխատանքներ:
4. Կատարվել է Հ. Թումանյան փողոցի և գյուղապետարանի գազաֆիկացման աշխատանքներ:
5. Կատարվել է թվով 3 ջրամղիչ պոմպերի վերանորոգում և ձեռք է բերվել թվով 3 ջրամղիչ պոմպ:
6. Կատարվել է Կոմիտաս փողոցի խաղահրապարակի և մանկապարտեզի ցանկապատի վերանորոգում:
7. Կատարվել է մանկապարտեզի ննջասենյակի հատակի վերանորոգում:
8. Գյուղապետարանի համար ձեռք է բերվել աթոռներ:
9. Կատարվել է Չարենցի փողոցի ջրահեռացման համակարգի կապիտալ նորոգում:
10. Կատարվել է գյուղապետարանի խմելու ջրագծի ընթացիկ վերանորոգում:

Համայնքի ղեկավարի գործունեությունը առևտրի և սպասարկման բնագավառում

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգելից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի թույլտվություն:

Հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն է իրականացվել:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Պարբերաբար տարվում են Ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման և պահպանման աշխատանքներ:

Ազատ ոճի ըմբշամարտ սպորտաձևի մարտախաղում Հայաստանի Հանրապետությունում առաջին տեղը գրաված համայնքի բնակիչ Էդգար Էդիկի Թամազյանին և երրորդ տեղը գրաված Մուրադ Վրեժի Հարությունյանին խրախուսել է տրամադրելով 60 000դրամ և 40 000դրամ:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով զբոսայգու և Կոմիտաս փողոցի համար ձեռք է բերվել ճոճանակ, կառուսել և սղարան:

Կրթության, մշակույթի և
երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Ապրիլի 7-ի «Մայրության և գեղեցկության տոնի» կապակցությամբ Ֆրանց Վերֆելի անվան դպրոցի, մանկապարտեզի, փոստի բաժանմունքի , գյուղապետարանի աշխատող կանանց, մանկապարտեզի սաների մայրերին նվիրվել է ծաղիկներ:

Մայիսի 9-ի հաղթանակի օրվա կապակցությամբ միջոցառում է կազմակերպել:

Տրամադրվում է ավտոբուս Մուսալեռի Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցի սաներին ավտոկանգառից դպրոց և դպրոցից ավտոկանգառ տեղափոխելու համար:

Առաջին դասարանցիներին տրվել է նվերներ:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում

Նպաստել է ինքնակամ հողազավթման կանխմանը:

Մուսալեռ համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

21.01.2014թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ղեկավարի հաշվետու ժողովի

2014 թվականի հունվարի 21-ին ժամը 14-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով:

Ժողովին ներկա էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանման բաժնի պետ՝ Հ. Պետրոսյանը, համայնքի ավագանու անդամները և համայնքի թվով 9 բնակիչներ:

Համայնքի բնակիչները համայնքի ղեկավարին հղեցին իրենց հուզող հարցերը:

Բնակիչները հիմնականում դժգոհում են ճանապարհների վիճակից, ցանկանում են համայնքի բոլոր փողոցները ու ճանապարհները լինեն բարեկարգ, ապահովված լինեն գիշերային լուսավորությամբ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2013 թվականի ընթացքում համայնքում կատարված աշխատանքերը, խոսեց հետագա ծրագրերի մասին, պատասխանեց համայնքի բնակիչների հուզող հարցերին:

Նա հայտնեց, որ գյուղապետարանի համար առաջնահերթ են համարվում այն աշխատանքների իրագործումը, ինչպիսիք են խմելու ջրագծերի անցկացումը, փողոցների և ճանապարհների բարեկարգումը:

Նախատեսվում է վերանորոգել գյուղապետարանի շենքը:

Կբարելավվի համայնքի ֆինանսական վիճակը՝ եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելով: Կապահովվի համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:

Հնարավորինս կնպաստի գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ կկիրառվեն:

Աշխատակազմի քարտուղար Գ. Մարտիրոսյան

Գ. Մուսալեռ

21.01.2014թ.